ԼՐԱՏՈՒ

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 60-ԱՄՅԱԿԻՆ

Հոկտեմբերի 15-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ ընդհանուր ժողովը՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման և Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմավորման 60-ամյակին։ Ժողովին ներկա էին ակադ. Կ. Դեմիրճյանը, Ֆ. Սարգսյանը, Կ. Դալլարյանը, Լ. Ներսիսյանը, ՀԿԿ կենտկոմի գիտության և ուսումնական հաստատություններ բաժնի վարիչ Ցա. Խաչիկյանը, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի պատվիրակությունը՝ ՍՍՀՄ ԳԱ փոխ պրեզիդենտ, ակադեմիկոս Ա. Սիդորենկոյի գլխավորությամբ, Վրացական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատվիրակությունը՝ ՎՍՍՀ ԳԱ փոխ պրեզիդենտ Ի. Գվերդծիթելիի գլխավորությամբ, Ադրբեջանական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատվիրակությունը՝ ԱՍՍՀ ԳԱ փոխ պրեզիդենտ Ջ. Գուլիևի գլխավորությամբ, ինչպես նաև հանրապետության բուհերի ղեկավարներ, մինիստրներ, կուսակցական, սովետական աշխատողներ։

Ժողովը ներածական խոսքով բացեց ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։ Մեր հանրապետության աշխատավորները, ասաց նա, սովետական ամբողջ ժողովրդի հետ պատրաստվում են նշելու կարևոր իրադարձության՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման և Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմավորման 60-ամյակը։ Նրանք շանք չեն խնայում արժանավայել դիմավորելու Հայաստանի կոմկուսի XXVII համագումարը, որը կամփոփի 10-րդ հնգամյակում հանրապետության տնտեսական ու սոցիալական նվաճումները և կբացահայտի հետագա առաջընթացի նոր հեռանկարներ։ Անտարակույս, ինչպես մինչև, հատկապես մշակույթի ու տնտեսության զարգացման բեկումնային փուլերում, այսօր ևս լուրջ խնդիրներ են ծառանում հանրապետության գիտահետազոտական հիմնարկների, մասնավորապես նրա գիտական ղեկավար կենտրոնի՝ գիտությունների ակադեմիայի առջև։ Վ. Հ. Համբարձումյանը, այնուհետև, համառոտակի խոսեց 10-րդ հնգամյակում ինստիտուտների և գիտական մյուս հիմնարկների կարևորագույն ձեռքբերումների մասին, նշեց գիտության այն բնագավառները, որտեղ հայ գիտնականները հասել են բարձր նվաճումների։ Վերջում նա կանգ առավ հանրապետության գիտնականների առաջնահերթ խնդիրների վրա, նշեց գիտության հետագա զարգացման, արտադրության մեջ նրա նվաճումների ներդրման գործում հեռանկարային հրատապ թեմաների հետազոտություններն ընդլայնելու, գիտական նորագույն սարքավորումներն արմատավորելու, կիրառական հետազոտություններն ըստ ամենայնի զարգացնելու անհրաժեշտությունը։

Հանրապետության գիտնականներին մեծ տարբերության առթիվ ջերմորեն ողջունեցին ՍՍՀՄ ԳԱ փոխ պրեզիդենտ, ակադեմիկոս Ա. Սիդորենկոն, ՎՍՍՀ փոխ պրեզիդենտ Ի. Գվերդծիթելին, ԱՍՍՀ ԳԱ փոխ պրեզիդենտ Ջ. Գուլիևը։

«Ազատագրված ժողովրդի վերածնունդը» զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիայի թղթակից անդամ Գ. Ա. Գալոյանը։ 1920 թվականի նոյեմբերի 29-ը, ասաց նա, հայ ժողովրդի բազմադարյան պատմության գլխավոր իրադարձության օրն է, որը սկիզբ դրեց նրա ազգային ու սոցիալական վերածննդին։ Սովետական Ռուսաստանի կառավարության ռազմական, քաղաքական և դիվանագիտական ամենաակտիվ օգնության շնորհիվ միայն հայ ժողովուրդը հաղթահարեց իմպերիալիզմի դիմադրությունը և ստեղծեց սոցիալիստական ազգային պետականություն։ Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, նշեց զեկուցողը, Սովետական Հայաստանը դարձել է բարձր զարգացած ինդուստրիայի և գյուղատնտեսության հանրապետություն՝ իր առաջավոր սոցիալիստական մշակույթով։ Այն ամենը, ինչ հայ ժողովուրդը ձեռք է բերել իր բազմադարյան պատմության այս 60 տարիներին, վերջում ասաց Գ. Գալոյանը, կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության կենսահաստատուն ուժի վառ ապացույցն է։

«Հայաստանի կոմունիստական կուսակցությունը ՍՄԿԿ մարտական շոկատներից մեկն է» թեմայով զեկուցում կարդաց ՀՍՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Գ. Բ. Ղարիբջանյանը: Նա նշեց, որ Հայաստանի կոմկուսը ՍՄԿԿ-ի հնագույն և հավատարիմ շոկատներից է, նրա պատմությունը սկիզբ է առնում XIX—XX դդ. սահմանագլխին Հայաստանում ստեղծված մարքսիստական խմբակներից, լենինյան իսկրայական, ապա՝ բոլշևիկյան կազմակերպություններից, որոնք առաջացել էին բանվորական հեղափոխական շարժումների զարգացման հիման վրա՝ սերտորեն կապված համառուսաստանյան հեղափոխական շարժումների, Վ. Ի. Լենինի գործունեության հետ։ Խոսելով Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո ՀԿԿ-ի գործունեության մասին, զեկուցողը շեշտեց, որ հանրապետության կոմունիստները անսահմանորեն նվիրված են կոմունիստական կուսակցության մեծ գործին և անշեղորեն պաշտպանում են ՍՄԿԿ ներքին ու արտաքին իմաստուն քաղաքականությունը։

«Միասնական բազմազգ սովետական մշակույթը» զեկուցումով հանդես եկավ Վրացական ՍՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստր, ՎՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Պ. Ցխիկվիշվիլին։ Սոցիալիստական մշակույթը, որ կերտում են մեր երկրի բոլոր ազգերն ու ժողովուրդները, ասաց նա, բացարձակապես եզակի, սկզբունքորեն նոր երևույթ է համաշխարհային քաղաքակրթության պատմության մեջ։ Այն իր մեջ ներդաշնակորեն զուգորդում է ինտերնացիոնալն ու ազգայինը, ունի քաղաքական-գեղագիտական միասնական ուղղվածություն, գեղարվեստական արտացոլման մեթոդի ընդհանրություն, գեղարվեստական, ոճական ու այլ ձևերի բազմազանություն։

Վերջում Հայկական ՍՍՀ ԳԱ պրեզիդենտ Վ. Համբարձումյանը շնորհակալություն հայտնեց ժողովին մասնակցելու եկած հյուրերին, ինչպես նաև զեկուցողներին՝ իրենց հետաքրքիր ու բովանդակալից ելույթների համար։

ՀՍՍՀ ԳԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Հոկտեմբերի 13-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ժողովը՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման և Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմավորման 60-ամյակին։ Բաժանմունքի 1976—1980 թթ. գործունեության հիմնական արդյունքների մասին հաշվետու զեկուցմամբ հանդես եկավ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Գ. Բ. Ղարիբջանյանը։ Հաշվետու ժամանակաշրջանում, ասաց նա, բաժանմունքի գիտական հիմնարկների գիտահետազոտական աշխատանքներն ուղղված են եղել ՍՄԿԿ XXV, ՀԿԿ XXVI համագումարների և ՍՄԿԿ Կենտկոմի ու ՀԿԿ Կենտկոմի վերջին պլենումների որոշումների կատարմանը։ Գաղափարական, քաղաքատիրակչական աշխատանքները բաժանմունքի ինստիտուտների գործունեության անբաժան մասն են կազմել։ Ղեկավարվելով ՍՄԿԿ Կենտկոմի 1979 թ. ապրիլի 27-ի «Գաղափարախոսական, քաղաքական-դաստիարակչական աշխատանքի հետագա բարելավման մասին» որոշումով՝ վերանայվել և ճշգրտվել են ինստիտուտների գիտահետազոտական աշխատանքների պլանները, որոնցում տեղ են գտել արդիական պրոբլեմներին վերաբերող բազմաթիվ թեմաներ։ Մեր ինստիտուտներում, այնուհետև ասաց զեկուցողը, բարձր մակարդակով նշվեց Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյա հոբելյանը։ Բաժանմունքը մեծ աշխատանք է ծավալել Հայաստանում սովետական իշխանության հաստատման և Հայաստանի կոմկուսի կազմավորման 60-ամյակը բարձր մակարդակով նշելու ու ՍՄԿԿ XXVI համագումարը արժանավայել դիմավորելու համար։

Անդրադառնալով 1976—1980 թթ. հաշվետու ժամանակաշրջանում բաժանմունքի գիտական հիմնարկների գործունեությանը, Գ. Բ. Ղարիբջանյանը հանգամանորեն խոսեց դրանցից յուրաքանչյուրի ձեռք բերած նվաճումների մասին։ Բաժանմունքի գիտական հիմնարկների աշխատակիցները, վերջում հույս հայտնեց զեկուցողը, այսուհետև ևս կանեն ամեն ինչ գիտակազմակերպչական բոլոր հարցերը, ինչպես նաև կուսակցության և կառավարության առաջադրանքները ժամանակին և անթերի կատարելու համար։

Ժողովում զեկուցումներով հանդես եկան ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամներ Մ. Խ. Քոչանյանը և Գ. Խ. Պարզյանը։ Մ. Խ. Քոչանյանի զեկուցման թեման էր «Տնտեսագիտությունը Սովետական Հայաստանում», իսկ Գ. Խ. Սարգսյանինը՝ «Արևելագիտության նվաճումները Սովետական Հայաստանում»։

ՀՍՍՀ ԳԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Հոկտեմբերի 14-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի ժողովը՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման և Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմավորման 60-ամյակին։ Ժողովը բացեց փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի ակադեմիկոս բարտուղարի պաշտոնակատար, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Գ. Ա. Բուդայանը։

«Սովետահայ գրականության առաջացման պատմական նախադրյալները և գեղագիտական բովանդակությունը» թեմայով զեկուցում կարդաց բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Բ. Աղաբաբյանը։ Վերածնության հույսերի և մեծ հավատի հոգեբանությունը, ասաց նա, կանխորոշեց XX դարասկզբի հայ գրականության գեղագիտական նոր բովանդակությունը՝ XIX դարի գրականության հինական գծերի հաբարեբությամբ։ Դարասկզբի հայ գեղարվեստը, բնավ լմոռանալով հայրենիքի երգը՝ աղգային վիշտը, փարեց գրականության նոր աստիճան նշանավորող գեղագիտական իդեալներին։ Այնուհետև զեկուցողը անդրադարձավ դարասկզբի հայ գրականության զարգացման հիմնական միտումներին։ Ի մի բերելով դարասկզբի գրականության բոլոր օղակները, ինչպես նաև հայ արվեստի երևույթները, վերջում ասաց նա, միանգամայն հստակ տեսնում ենք, որ այդ ժամանակաշրջանում արդեն հայ գրականության մեջ ձևավորվել էր ապագա գրականության հոգևոր-գեղագիտական պատվանդանը։

«Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում» զեկուցումով հանդես եկավ բանասիրական գիտությունների դոկտոր Ն. Ա. Պառնասյանը։ Նա ասաց, որ հայոց լեզուն պետական լեզվի վերածվելուց հետո միայն ունեցավ գործառության լայն շրջանակներ։ Խոսելով սովետական շրջանում հայոց լեզվի կառուցվածքի զարգացման մասին, զեկուցողը ցույց տվեց այն յուրահատկություններն ու զարգացման այն միտումները, որոնք բնորոշ են ժամանակակից հայերենին։ Լեզվի կառուցվածքի մեջ ամենաարագ փոփոխվող և հասարակական-քաղաքական կյանքի զարգացմանն անմիջապես արձագանքող մասը բառապաշարն է, այնուհետև ասաց Ն. Ա. Պառնասյանը և անդրադարձավ այն հիմնական տեղաշարժերին, որ կատարվել են հայոց լեզվի մեջ, առանձնապես՝ տերմինաբանության մշակման բնագավառում և բառակազմական պրոցեսներում։

Զեկուցումները հետաքրքիր ու բովանդակալից էին և լսվեցին մեծ ուշադրությամբ։

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՁԱՔԱՐՅԱՆ

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ՝ ՆՎԻՐՎԱԾ ՍՍՀՄ-ՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆԸ ԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ԱՍԻԱՅԻ ՈՒ ԱՖՐԻԿԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1980 թ. հոկտեմբերի 8—10-ը տեղի ունեցավ «Ազգային հարցի լուծումը ՍՍՀՄ-ում և նրա նշանակությունը Աֆրիկայի և Ասիայի զարգացող երկրների համար» թեմայով համամիութենական սեմինար՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման 60-ամյակին։ Սեմինարը կազմակերպել էին ՍՍՀՄ ԳԱ Աֆրիկայի պրոբլեմներով զբաղվող գիտական խորհուրդը, ՍՍՀՄ ԳԱ Աֆրիկայի ինստիտուտը, ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտը, Ասիայի և Աֆրիկայի երկրների համերաշխության սովետական կոմիտեն։ Նրա աշխատանքներին մասնակցում էին Մոսկվայի, Լենինգրադի և մի շարք միութենական հանրապետությունների անվանի գիտնականներ, ինչպես նաև Հարավային Աֆրիկայի ազգային կոնգրեսի, Բենինի ժողովրդական հեղափոխական կուսակցության, խաղաղության համերաշխության հասարակական կազմակերպության, ամբողջ աշխարհի խաղաղության համար համերաշխության զամբիական կոմիտեի պատվիրակությունները։

Սեմինարը ներածական խոսքով բացեց ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։ Նա նշեց, որ ազգային հարցը հասարակական կյանքի ամենաբարդ և դժվար լուծելի պրոբլեմներից է։ Նրա ճիշտ լուծումը պահանջում է քաղաքական ու սոցիալ-տնտեսական աբնպիսի պայմաններ, որոնք ի վիճակի լինեն ռեալ հնարավորություններ ու երաշխիքներ ստեղծելու ազգային ճնշումը վերացնելու և ազգերի միջև հավասարություն հաստատելու համար։ Այդ պայմանները մեր երկրում առաջացան Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից և աշխարհի առաջին սոցիալիստական պետությունը հիմնադրելուց հետո։ ՍՄԿԿ անշեղ լենինյան ազգային քաղաքականության շնորհիվ ժողովուրդների բանտ նախկին ցա-